ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր քաղաքում են ընդունել օզոնային շերտը պաշտպանելու արձանագրությունը։**

1) Մոնրեալ
2) Դուբլին
3) Կոպենհագեն
4) Սիդնեյ

2 **Ավստրալիայում թեթև արդյունաբերությունը առավելապես ինչի՞ վրա է հիմնված։**

1) բուրդ
2) բամբակ
3) կաուչուկ
4) վուշ

3 **Աֆրիկայում ո՞րը միապետություն չէ.**

1) Մոզամբիկ
2) Մարոկկո
3) Սվազիլենդ
4) Լեսոտո

4 **Ո՞ր կլիմայական գոտին *չի* ներառում ԱՄՆ տարածքը։**

1) մերձարևադարձային
2) արևադարձային
3) մերձհասարակածային
4) բարեխառն

5 **Մարակաիբո ծոցը ո՞ր պետության տարածքում է գտնվում։**

1) Էկվադոր
2) Արգենտինա
3) Բոլիվիա
4) Վենեսուելա

6 **Ո՞րը Ասիայի լճերից չէ.**

1) Վան
2) Բայկալ
3) Չադ
4) Սևան

7 **Աշխարհի բնակչության քանի՞ տոկոսն է ապրում Ասիայում:**

1) 50%
2) 40%
3) 30%
4) 60%

8 **Ասիական ո՞ր երկիրը *չունի* տնտեսական զարգացման ցածր ցուցանիշ:**

1) Մյանմա
2) Մոնղոլիա
3) Բահրեյն
4) Աֆղանստան

9 **Չինաստանը արտադրում է համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի**

1) 1/3-ը
2) 1/4-ը
3) 1/5-ը
4) 1/2-ը

10 **Ո՞ր լեզվաընտանիքի մեջ է մտնում վրացերենը:**

1) չին-տիբեթական
2) ալթայան
3) կովկասյան
4) հնդեվրոպական

11 **Ո՞ր երկրի տարածքավ *չի* անցնում Դանուբ գետը:**

1) Մոլդովա
2) Սլովակիա
3) Գերմանիա
4) Բելոռուս

12 **Ո՞րը ՌԴ սև մետաղաձուլական բազա *չէ*.**

1) Կենտրոնական
2) Ուրալյան
3) Սիբիրյան
4) Մոսկովյան

13 **Ո՞ր ազգի ներկայացուցիչներն են ամենաքիչը ներգաղթել Գերմանիա վերջին տասնամյակներին:**

1) լեհեր
2) ռումինացիներ
3) շվեդներ

4) իտալացիներ

14 **Ո՞ր երկիրն ունի չափազանց մեծ կախվածություն օտարերկյա ներդրումներից։**

1) Նորվեգիա
2) Ֆինլանդիա
3) Էստոնիա
4) Իսլանդիա

15 **Ո՞րը Հայկական հրաբխային բարձրավանդակի մաս *չէ*.**

1) Արևելյան
2) Կենտրոնական
3) Հարավային
4) Հյուսիսային

16 **Քանի՞ կմ է ՀՀ ամենաերկար ձգվածությունը։**

1) 370 կմ
2) 380 կմ
3) 390 կմ
4) 360 կմ

17 **Ցարական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանում ո՞ր վարչական միավորը *չկար։***

1) գավառներ
2) մարզեր
3) ոստիկանական տեղամասեր
4) նահանգներ

18 **Ընտրել ՀՀ բնական ռեսուրսների և հանքավայրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պղնձամոլիբդենային	1. Մեղրաձոր
բ. ոսկի	2. Թեղուտ
գ. նեֆելինային սիենիտ	3. Սվարանց
դ. երկաթ	4. Շվանիձոր

1) ա–2, բ–4, գ–1, դ–3
2) ա–3, բ–4, գ–1, դ–2
3) ա–3, բ–1, գ–4, դ–2
4) ա–2, բ–1, գ–4, դ–3

19 **Ո՞ր լեռներից եկած լավաներով է ծածկվել Լոռու գոգավորությունը.**

1) Բազումի
2) Ջավախքի

3) Գուգարաց
4) Փամբակի

20 **ՀՀ տարածքում տարվա ընթացքում օդային հոսանքների ո՞ր հոսքն է տիրապետում:**

1) արևելյան
2) արևմտյան
3) հարավային
4) հյուսիսային

21 **ՀՀ-ում ջրօգտագործմանը վերաբերող պնդումներից ո՞րն է առջարկվող լուծում համարվում.**

1) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի օպերատիվ մոնիթորինգի համակարգի բացակայություն
2) Ջրի չհաշվառված ծախսերի բարձր շեմ, անխնա ջրօգտագործում
3) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի կրճատմանն ուղղված մեթոդական ուղեցույցների մշակում
4) Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների և նորմատիվների բացակայություն

22 **ՀՀ տարածքի քանի՞ տոկոսն է ընդգրկում սելավների և ջրհեղեղների ազդեցության գոտին:**

1) 40%
2) 50%
3) 60%
4) 30%

23 **ՀՀ բնակչության արտագաղթի վերաբերյալ պնդումներից ո՞րը բացասական հետևանք *չէ:***

1) երկիրը զրկվում է տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից
2) մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները
3) մեղմանում է գործազրկությունը
4) մարդկային կապիտալի արտահոսք

24 **ՀՀ ո՞ր մարզում է գտնվում ամենահզոր արևային ֆոտովոլտային կայանը:**

1) Սյունիք
2) Գեղարքունիք
3) Կոտայք
4) Արագածոտն

25 **Ո՞ր հանքավայրի շահագործման ծրագիրն է դադարեցվել՝ արժանանալով հայաստանյան հասարակական և մասնագիտական շրջանակների սուր քննադատությանը՝ կապված բնապահպանական հնարավոր շատ բացասական հետևանքների հետ։**

1) Թեղուտի
2) Ախթալայի
3) Ագարակի
4) Ամուլսարի

26 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի մեքենաշինության ո՞ր ճյուղը գլխավորներից *չէր։***

1) ռոբոտների արտադրություն
2) ավտոմատացման համակարգերի արտադրություն
3) ռադիոէլեկտրոնային արդյունաբերություն
4) էլեկտրատեխնիկական արդյունաբերություն

27 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի ո՞ր քաղաքում կար սինթետիկ կորունդների արտադրություն։**

1) Վանաձոր
2) Եղեգնաձոր
3) Վաղարշապատ
4) Երևան

28 **Նշվածներից ո՞ր պարարտանյութը ՀՀ օրգանական գյուղատնտեսությանը բնորոշ *չէ*.**

1) կենսահումուս
2) թռչնաղբ
3) ազոտական պարարտանյութ
4) գոմաղբ

29 **Բնության և հասարակության բաղադրիչների տեղաբաշխումը, դրանց միջև առկա տարածական կապերը և օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է.**

1) աշխարհագրություն
2) պատմություն
3) քաղաքագիտություն
4) երկրաբանություն

30 **Ո՞րը քարտեզների դասակարգման սկզբունք չէ՞.**

1) ըստ բովանդակության
2) ըստ նշանակության
3) ըստ ընդհանրացման
4) ըստ մասշտաբի

31 **Ո՞րն աշխարհագրական թաղանթի գլխավոր հատկանիշ չէ.**

1) զոնայականություն
2) մակընթացություն
3) ամբողջականություն
4) գոտիականություն

32 **Ո՞ր մայրցամաքն է ամենամեծը.**

1) Գոնդվանա
2) Եվրասիա
3) Լավրասիա
4) Պանգեյա

33 **Ո՞րն է մայրցամաքային ծանծաղուտի ամենաստորին խորությունը.**

1) 200 մ
2) 300 մ
3) 400 մ
4) 100 մ

34 **Ընտրել «մարզ — մարզկենտրոն» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Սյունիք	ա. Հրազդան
2. Շիրակ	բ. Կապան
3. Արարատ	գ. Արտաշատ
4. Կոտայք	դ. Գյումրի

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Դ տառով.**

1) Պերուական
2) Բենգելյան
3) Կալիֆոռնիական
4) Ֆոլկլենդյան

36 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Գ տառով.**

1) Կուրոսիո
2) Գվիանական

3) Մոզամբիկի
4) Գվինեական

քարտեզ 2



37 **Քարտեզ 2-ում ո՞ր լեռնաշղթան է նշված Ա տառով.**

1) Մռավի
2) Ուրծի
3) Վայքի
4) Մեղրու

38 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով.**

1) Կոտայք
2) Արմավիր

3) Շիրակ
4) Արագածոտն

39 **Ո՞րը Համաշխարհային տնտեսության փուլ չէ.**

1) հետագրարային
2) արդյունաբերական
3) հետարդյունաբերական
4) ագրարային

40 **Ո՞րը Հարավային կոնի երկիր չէ.**

1) Պարագվայ
2) Մադագասկար
3) Բրազիլիա
4) Արգենտինա

41 **Ո՞րը արդյունաբերության տարածքային կազմակերպման ձև չէ.**

1) արդյունաբերական կենտրոն
2) արդյունաբերական հանգույց
3) արդյունաբերական երկրամաս
4) արդյունաբերական կետ

42 **Ո՞ր երկիրը երկաթաքար չի արտահանում.**

1) Ճապոնիա
2) Հնդկաստան
3) Բրազիլիա
4) Ավստրալիա

43 **Ո՞ր կլիմայական գոտին ունի ագրոկլիմայական շատ ցածր ներուժ.**

1) մերձարևադարձային
2) բարեխառն
3) մերձարկտիկական
4) արևադարձային

44 **Ո՞ր ը կապի տեսակ չէ.**

1) հեռախոս
2) խողովակաշարային
3) ռադիո
4) հեռապատճենային

45 **Ո՞ր ծառայությունն է արտադրական տեսակի.**

1) առևտուր
2) կապ

3) մշակույթ
4) լիզինգ

46 **Ո՞ր ը ինքնատիպ տարածաշրջան *չէ*.**

1) համաաշխարհագրական
2) լեռնային
3) քաղաքակրթական
4) ծովային

47 **Ո՞ր երկիրը *չի* համարվում նոր արդյունաբերական.**

1) Սինգապուր
2) Հոնկոնգ
3) Լյուքսեմբուրգ
4) Թայվան

48 **Ըստ բնույթի ինչպիսի՞ համամոլորակային հիմնախնդիր *չկա*.**

1) բնատնտեսական
2) սոցիալական
3) կապի
4) համընդհանուր քաղաքական

49 **Ո՞րը էկոլոգիական հավասարակշռության խախտման անմիջական հետևանք *չէ*.**

1) էկոլոգիական ճգնաժամ
2) էկոլոգիական անվտանգություն
3) էկոլոգիական աղետ
4) էկոլոգիական լարվածություն

50 **Ըստ հաշվարկների որքա՞ն կբավարարեն ածխի պաշարները մարդկությանը։**

1) 500 տարի
2) 400 տարի
3) 300 տարի
4) 600 տարի

51 **Ո՞րը «ժողովրդագրական պայթյունի» անմիջական հետևանք *չէ*.**

1) գործազրկության աճ
2) սոցիալական հակասությունների սրում
3) մահացության աճ
4) ժողովրդի բարեկեցության ցածր մակարդակ

52 **Ո՞րը մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչ *չէ*.**

1) երկարակեցություն
2) քաղաքականություն
3) կրթվածություն
4) կենսամակարդակ

53 **Ո՞րը աշխարհագրական մտածողության հատկանիշ չէ.**

1) ռիթմիկություն
2) համալիրություն
3) կոնկրետություն
4) տարածականություն

54 **Ո՞ր մեթոդի միջոցով է հայտնաբերվել օդի ջերմաստիճանի վերընթաց փոփոխության օրինաչափությունը:**

1) նկարագրական
2) համեմատական
3) վիճակագրական
4) քարտեզագրական

55 **ԱՏՀ-ում ո՞ր համակարգն է թույլ տալիս ծրագրային բաղադրիչների օգնությամբ բազաներից ընտրված տվյալների հիման վրա ստեղծել բոլորովին նոր քարտեզ.**

1) քարտեզների արտացոլման
2) աշխարհագրական վերլուծության
3) տվյալների բազայի կառավարման
4) պատկերների մշակման

56 **Գրել հրաբխային ծագման ապարների համարները.**

1) բազալտ
2) քարածուխ
3) մարմար
4) կրաքար
5) կավ
6) գրանիտ
7) տուֆ
8) քարաղ

57 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքի մեծությամբ համարվում են գերխոշոր.**

1) Գերմանիա
2) Կանադա
3) Ռուսաստան
4) Իրան
5) Ուկրաինա
6) Ճապոնիա
7) Չինաստան
8) Ավստրալիա

58 **Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով համարվում են հսկա.**

1) Բելոռուս
2) Իրաք
3) Հնդկաստան
4) Չինաստան
5) Ինդոնեզիա
6) Լիբանան
7) Ֆրանսիա
8) Վրաստա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Դանիա
2) Բելգիա
3) Ուկրաինա
4) Ֆրանսիա
5) Նորվեգիա
6) Բրազիլիա
7) Շվեդիա
8) Քուվեյթ

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է երեխաների բաժինը.**

1) Իսլանդիա
2) Գերմանիա
3) Աֆղանստան
4) Հնդկաստան
5) Նիգերիա
6) Պակիստան
7) Նորվեգիա
8) Շվեդիա

61 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականություն.**

1) Իտալիա
2) Արգենտինա
3) Ինդոնեզիա
4) Ճապոնիա
5) Վենեսուելա
6) Պորտուգալիա
7) Սիրիա
8) Իրան

62 **Տրված օվկիանոսների համարները դասավորել ըստ դրանց տարածքի մակերեսի նվազման կարգով.**

1) Խաղաղ
2) Ատլանտյան
3) Հնդկական

63 **Տրված լճերի համարները դասավորել ըստ նրանց բացարձակ բարձրության նվազման կարգով.**

1) Տիտիկակա
2) Սևան
3) Կասպից

64 Գետի միջին ծախսը 22 մ³/վ է: Որոշել գետի հոսքը 1 ժամում:

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ.ե.40˚-ի վրա է, մյուսը՝ արմ.ե.70˚-ի: **Որոշել քաղաքների միջև ամենակարճ հեռավորությունը:**

66 Երկրի մակերեսը կազմում է 200 000 կմ²: Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2000 000 քարտեզում:

67 Երկրի բնակչության թիվը 80 000 է, բնական աճի գործակիցը՝ 25‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 2700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 6 մլն. է, երկրի բնակչության թիվը՝ 8 մլն. է: Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհագրության կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ընդհանուր աշխարհագրությունն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթների տարածքային փոփոխությունների համար:
2) Բնական աշխարհագրության ճյուղային գիտություններից են երկրաձևաբանությունը, կլիմայագիտությունը և հողերի աշխարհագրությունը:
3) Հնէաշխարհագրությունը, լանդշաֆտագիտությունը, մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը համալիր գիտություններ են հասարակական աշխարհագրության կազմում:
4) Որպես աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ աշխարհագրությունը մտնում է բնական գիտությունների, իսկ որպես մարդոլորտի հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ հասարակական գիտությունների համակարգի մեջ:
5) Հասարակական աշխարհագրական գիտություններն ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի ոլորտներում տեղի ունեցող բնական երևույթները:
6) Բնական աշխարհագրության կազմում առանձնահատուկ կարևոր տեղ ունի բնակչության աշխարհագրությունը, քանի որ նրա ուսումնասիրության առարկան սերտորեն կապված է բնական միջավայրի հետ:

70 **Ազիմուտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) 105° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:
2) 95° ազիմուտը հորիզոնի հյուսիսարևելյան կողմում է:
3) 115° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:
4) Հյուսիսային ազիմուտը 0° կամ 360° է:
5) Արևմուտքի ազիմուտը 90° է:
6) Հարավի ազիմուտը 180° է: